

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

N 18-29  
19.03.2017

**ՀՀ արդարադատության նախարար  
Պարոն Դավիթ Հարությունյանին**

Հարգելի պարոն Հարությունյան,


ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը իր գործունեության ընթացքում առնչվել է դեպքերի, երբ քրեակատարողական հիմնարկների ներկայացուցիչները դատապարտյալներին և կալանավորված անձանց կամ նրանց մատնացույց արված անձանց չեն թույլատրել ծանոթանալ բժշկական քարտին և փաստաթղթերին, այլ միայն տրամադրել են քաղվածք՝ հիմնվելով ՀՀ կառավարության 2006թ. 825-Ն հրամանի 7-րդ գլխի 55 կետի 4-րդ պարբերությամբ՝ ըստ որի «Հիվանդության պատմագրում պարունակվող տեղեկություններին ծանոթանալու նպատակով՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին, ինչպես նաև նրանց գրավոր համաձայնությամբ մատնացույց արված անձանց տրվում է հիվանդության պատմագրից քաղվածք՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին»:

ՄԱԿ-ի՝ կալանավորված անձանց վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ) 26-րդ կանոնի 1-ին կետի համաձայն բժշկա-սանիտարական ծառայությունը պետք է վարի ճշգրիտ թարմացված և կոնֆիդենցիալ անհատական բժշկական քարտեր բոլոր կալանավորվածների վերաբերյալ, և բոլոր կալանավորվածներին պահանջի դեպքում պետք է ապահովի հասանելիությունը նրանց բժշկական քարտերին: Կալանավորվածը կարող է նշանակել երրորդ անձի իր բժշկական քարտին ծանոթանալու համար:

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք նախաձեռնել փոփոխության առաջարկություն ՀՀ կառավարության 2006թ. 825-Ն հրամանի 7-րդ գլխի 55-րդ կետը Նելսոն Մանդելայի կանոններին համապատասխանեցնելու վերաբերյալ, իսկ մինչ այդ՝ ՀՀ քրեակատարողական հիմնարկներին հանձնարարել նման խնդիրներ առաջանալու դեպքում առաջնորդվել Նելսոն Մանդելայի կանոններով:

**Հարգանքով՝**

**ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում  
և մարմիններում հասարակական վերահսկողություն  
և իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ**

  
**Արայիկ Զախյան**